ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԽԱՆԶԱԴՅԱՆ ՄԱՐԻԱՄ ԳԱԳԻԿԻ

ՎԱՂ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐՆ ՈՒ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԻ Մ.Թ.Ա. II ՀԱԶԱՐԱՄՅԱԿԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ)

Է.00.02 – «Համաշխարհային պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2026

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտում:

Գիտական ղեկավար՝

պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Արամ Վաղարշակի Քոսյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Պավել Սեդրակի Ավետիսյան

պատմական գիտությունների թեկնածու
Ռուսլան Արշակի Ցականյան

Առաջատար կազմակերպություն՝

Խաչատուր Աբովյանի անվան
հայկական պետական մանկավարժական համալսարան

Ատենախոսության հրապարակային պաշտպանությունը կայանալու է 2026 թ. սեպտեմբերի 18-ին, ժամը 12:30-ին, Արևելագիտության ինստիտուտում գործող ԲԿԳԿ-ի Համաշխարհային պատմության 006 մասնագիտական խորհրդում (հասցե՝ 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա, 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Արևելագիտության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրը առաքված է 2026 թ. օգոստոսի 17-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական
քարտուղար՝ **պ.գ.թ., դոցենտ Ա. Ա. Փաշայան**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Վաղ պետականության ձևավորման խնդիրները հասարակական գիտությունների առանցքային հարցերից են և հանգամանալից մշակված են համաշխարհային պատմագիտության մեջ: Աշխատությունն արդիական է հայաստանյան պատմագիտության մեջ Հայկական լեռնաշխարհի մ.թ.ա. II հազարամյակի վաղ պետականությունների ձևավորման հայեցակարգերի ամբողջացման և արդի տեսակետների քննության համատեքստում:

Թեմայի նպատակներն ու խնդիրները: Ատենախոսության նպատակն է ներկայացնել պոլիտոգենեզի վերաբերյալ մասնագիտական գրականության մեջ առկա տեսական մոտեցումները և դրանց համատեքստում դիտարկել Հայկական լեռնաշխարհի մ.թ.ա. II հազարամյակի վաղ պետականությունների կազմավորման և զարգացման հարցերը: Ատենախոսության օբյեկտը Հայկական լեռնաշխարհում վաղ պետականությունների ձևավորման գործընթացն է: Ուսումնասիրության առարկան այդ գործընթացի առանձնահատկություններն ու դրանց մեկնաբանման հնարավորություններն են՝ պետականության ձևավորման տեսական մոտեցումների, ինչպես նաև տարածաշրջանին վերաբերող գրավոր և հնագիտական աղբյուրների համադրման հիման վրա:

Նշված նպատակի իրագործման համար առաջադրվել են հետևյալ խնդիրները.

1. Վերլուծել պոլիտոգենեզի հիմնական տեսական ուղղությունները՝ դասական էվոլյուցիոնիզմը, նեոէվոլյուցիոնիզմը և ժամանակակից մարդաբանական մոտեցումները:
2. Բացահայտել այդ տեսությունների կիրառելիության սահմանները վաղ հասարակությունների ուսումնասիրության համատեքստում:
3. Քննարկել Հայկական լեռնաշխարհի մ.թ.ա. II հազարամյակի աղբյուրագիտական և հնագիտական տվյալները՝ որպես սոցիո-քաղաքական կազմակերպման հնարավոր վերակառուցման հիմք:
4. Համադրել տեսական մոդելներն ու Հայկական լեռնաշխարհի հնագիտական նյութը՝ բացահայտելու տարածաշրջանի պետականաստեղծ գործընթացների առանձնահատկությունները:

Մեթոդաբանությունը: Աշխատությունը միջգիտակարգային ուսումնասիրություն է, որում համադրվում են պատմության և հնագիտության տվյալները, ինչպես նաև պետության տեսության և իշխանության մարդաբանության տեսական ու մեթոդաբանական մոտեցումները: Կիրառվել են պատմահամեմատական և հետհայացության (*retrospective*) մեթոդները, տիպաբանական վերլուծություններ ու համակարգային մոտեցման տարրեր:

Հետազոտության գիտական նորույթը և կիրառական նշանակությունը Ատենախոսության գիտական նորույթը պետականաստեղծ գործընթացների դասական էվոլյուցիոնիստական և նոր էվլյուցիոնիստական տեսությունների համակարգված ներկայացումն է, ինչպես նաև հետպրոցեսուալ հնագիտության և գործողունակության (agency) տեսությունների կիրառումը Հայկական լեռնաշխարհի սոցիո-քաղաքական կազմավորումների վերաբերյալ:

Ատենախոսությունում առանձնացված են Հայկական լեռնաշխարհում պոլիտոգենեզի ուսումնասիրման երկու մակարդակ՝

1. արդի պատմագիտության մեջ ընդունված մոտեցումները, խոշոր դպրոցներն ու հայեցակարգերը,
2. Հայկական լեռնաշխարհի վաղ պետականությունների վերաբերյալ աղբյուրագիտական և հնագիտական բնույթի հետազոտությունները:

Ուսումնասիրության գիտական նորույթը այդ երկու մակարդակների մեկտեղումն է մեկ հարթությունում:

Հետազոտության ժամանակագրական սահմանները: Հետազոտության ժամանակագրական սահմաններն են մ.թ.ա. III - II հազարամյակները՝ Միջին բրոնզի դարից մինչև Վաղ երկաթի դար ընկած ժամանակաշրջանը: Տվյալ ժամանակաշրջանն ընդգրկում է հետկուրարաքսյան շրջանից մինչև ուրարտական քաղաքակրթության ձևավորումն ընկած ժամանակահատվածը:

Հետազոտության կիրառական նշանակությունը: Պոլիտոգենեզի տեսություններին նվիրված սույն ատենախոսությունը համաշխարհային պոլիտոգենետիկ տեսական ժառանգությունն ի մի բերելու փորձ է: Այն հնարավորություն է ընձեռում ծանոթանալ վաղ պետությունների առաջացման տեսություններին՝ ամբողջացված և արդի տեսակետների համատեքստում քննված շարադրանքում: Ատենախոսությունը կարող է օգտակար լինել վաղ պետությունների տեսական հարցերով զբաղվող պատմաբանների, հնագետների և տեսաբանների համար: Այն կարող է օգտագործվել որպես ուսումնական նյութ՝ պետության առաջացման հարցերի դասավանդման և ուսումնասիրման ժամանակ:

Հետազոտության ուսումնասիրման աստիճանը: Պետության հիմնախնդիրներով հասարակական միտքը զբաղվել է հին ժամանակներից սկսած: Հետագայում պետության ձևավորման պատճառների և առանձնահատկությունների ուսումնասիրությունները հետազոտական վիթխարի հենք են ստեղծել՝ արդյունքում վերածվելով ընդարձակ մարդաբանական նախագծի[1]: Այդ հետազոտական հենքի հիմնական ձեռքբերումների վերլուծությանն են նվիրված ատենախոսության առաջին երկու գլուխները: Մինչև 1920 թ. Հայկական լեռնաշխարհի վաղ պետական կազմավորումների սոցիալ-հասարակական տիպաբանության հարցերը չեն արծարծվել: Այս խնդրին չի անդրադարձել նաև Ն. Ադոնցը, բացառությամբ Հայասայի կառավարիչ Խուկաննայի և Խեթական տերության տիրակալ Սուպպիլուլիումաս I-ի կարգավիճակային հավասարության մասին դրույթից, որն այժմ հերքվում է[2]: Խորհրդային տարիներին հայրենական գիտության մեջ գերակայող էր խորհրդային մարքսիզմի դոգմատիկ համակարգը: Ըստ այդմ էլ Հայկական լեռնաշխարհի վաղնջագույն պետականությունների առաջացումը քննարկվել և ուսումնասիրվել է հենց այդ ծիրում:

Հայկական լեռնաշխարհի վաղ պետական միավորները դասվել են մարքսիստական *«ռազմական դեմոկրատիայի» և «ցեղային միության»* փուլին: Հավելյալ կռվան գիտնականների համար դարձել է արխաիկ հասարակություններին բնորոշ իրավական որոշ նորմերի առկայությունը Հայասայում, մասնավորապես սորորատի իրավունքը: Այս տեսակետն է ներկայացված Գր. Ղափանցյանի[3], Ի. Դյակոնովի[4] և Գ. Մելիքիշվիլու[5] աշխատանքներում: Առավել հանգամանալից այս խնդրին անդրադարձել է Լ. Բարսեղյանը[6]: Մարքսյան հայեցակարգի շրջանակներում են գրվել նաև «Հայ ժողովրդի պատմության» ակադեմիական հրատարակության առաջին հատորի՝ սոցիալական հարաբերությունների զարգացմանը վերաբերող հատվածները: Փոքր Ասիայի արևելյան հատվածի քաղաք-պետությունները և Թեգարամա, Մելիդու ու Կումմուխու քաղաք-պետություններն, ըստ հեղինակների, գտնվում են *«ռազմական դեմոկրատիայի»*[7] փուլում, և նրանց առաջնորդներն առաջին

---

[1] **Abélès** 2005: 794.
[2] **Քոսյան** 2016: 130:
[3] **Капанцян** 1947**:** 116.
[4] **Дьяконов** 1968: 81; 1988: 146.
[5] **Меликишвили** 1959: 170-171:
[6] **Բարսեղյա**ն 1963: 103-106: **Բարսեղյան** 1964: 78:
[7] **Մարտիրոսյան** 1971: 229:

անգամ «թագավոր» են անվանվել ասորեստանյան տարեգրություններում՝ մ.թ.ա. XIII դարի վերջում[8]:

Որպես պետականաստեղծ ազդակ դիտարկվում են պատերազմները[9] և որոշ շրջանում համայնքի ներուժի կուտակման գործոնը[10], իշխող խավի առանձնացումը[11]:

Հետխորհրդային շրջանում հայ պատմագիտության մեջ մարքսիստական էվոլյուցիոնիստական տիպաբանության հարցերը գրեթե չեն քննարկվել:

Նեոէվոլյուցիոնիստական սխեմաները և հայեցակարգերը հետխորհրդային հայկական պատմագրության մեջ կիրառվել են Պ. Ավետիսյանի «Հայկական լեռնաշխարհը մ.թ.ա. XXIV-IX դարերում: Սոցիալ-մշակութային ձևափոխումների դինամիկան ըստ հնագիտական տվյալների»[12] աշխատության մեջ: Իրավամբ նշելով, որ ոչ մարքսյան տեսությունները և հայեցակարգերը դուրս են մնացել հայ պատմագրության ուսումնասիրության ոլորտից, Պ.Ավետիսյանն աշխատության մեջ մեթոդաբանական տեսակետից օգտագործում է Մ.Ֆրիդի, Է. Սերվիսի և Մ. Սալինզի, Ջ. Սթյուարդի և Հ. Կլասենի սխեմաներն ու հայեցակարգերը[13]: Առանձնահատուկ ուշադրություն է հատկացված «կոմպլեքս հասարակություն» և «ցեղապետություն» հասկացություններին:

Վերոնշյալը հաշվի առնելով՝ կարևոր ենք համարել վաղ պետության առաջացման հիմնական՝ էվոլյուցիոնիստական (Հ.Սպենսեր, Լ.Մորգան, Կ. Մարքս, Կ.Վիտֆոգել), նեոէվոլյուցիոնիստական (Գ.Չայլդ, Լ.Ուայթ, Ջ. Սթյուարդ, Մ.Ֆրիդ, Է.Սերվիս, Մ.Սալինզ, Ռ.Կարնեյրո, Ք.Ռենֆրյու և Հ. Կլասեն) և արդի (կորպորատիվ-ցանցային, հետերարխիայի և գործողունակության) հայեցակարգերի ամփոփ ներկայացումն ու վերլուծությունը՝ հայրենական պատմագիտության մեջ այդ հայեցակարգերը ներբերելու և դրանց հիման վրա Հայկական լեռնաշխարհի սոցիո-քաղաքական կազմավորումները վերլուծելու մտադրությամբ: Ընդհանուր առմամբ, ատենախոսության շրջանակներում քննարկվել են մոտ քսան տեսություններ և հայեցակարգեր:

---

[8]**Դյակոնով, Երեմյան** 1971: 195, 196:
[9]**Պիոտրովսկի** 1971: 284:
[10]**Դյակոնով** 1971: 292:
[11]**Մարտիրոսյան** 1971:224:
[12]**Ավետիսյան** 2014:
[13]**Նույնը**: 4-7.

Պոլիտոգենետիկ հետազոտությունների առանձնահատկությունները

Առհասարակ վաղնջագույն շրջանի հասարակությունների, այդ թվում Հայկական լեռնաշխարհի վաղ հասարակությունների ուսումնասիրությունը անխուսափելիորեն ընտրովի բնույթ ունի և պարունակում է բազմաթիվ խնդիրներ ու բացեր: Դա պայմանավորված է մի շարք հանգամանքներով.

ա. Պոլիտոգենետիկ տեսություններն ու հայեցակարգերը ոչ միայն վերլուծում են վաղնջագույն գործընթացներն, այլև ժամանակակակից (կամ այդ տեսության ստեղծման ժամանակաշրջանի) հետազոտական հայացքի արդյունք են, որում անցյալը մեկնաբանվում է ժամանակի տեսական և մշակութային չափանիշների պրիզմայով:

բ. Հայկական լեռնաշխարհը հնագիտական ուսումնասիրման տեսակետից ներկայացված է ոչ համաչափ:

գ. Հայկական լեռնաշխարհի ոչ բոլոր հատվածներն են ներկայացված գրավոր աղբյուրներում (մասնավորապես՝ մ.թ.ա. II հազարամյակում բավականին մանրամասն է ներկայացված արևմուտքն ու հարավ-արևմուտքը, բայց բացակայում են գրավոր աղբյուրները հյուսիս-արևելյան հատվածների մասին), առկա աղբյուրներին էլ բնորոշ է գաղափարախոսական հագեցվածությունը:

դ. Գրավոր աղբյուրներում կիրառվող եզրույթներն ունեն իրենց առանձնահատկությունները: Ոչ միշտ է հնարավոր «արքա» տիտղոսի կիրառումը դիտարկել որպես լիարժեք պետականության գոյության վկայություն, քանի որ տվյալ եզրույթը հաճախ օգտագործվում է որպես ձևական կամ գաղափակարականացված հասկացություն, որը երբեմն չի համընկնում տվյալ հասարակության քաղաքական կազմակերպման մակարդակի և մեխանիզմների հետ: Այն արտացոլում է քաղաքական կենտրոնացվածության որոշակի մակարդակ, որը կարող է զուգակցվել իշխանության կազմակերպման հետերարխիկ, ցանցային կամ բազմակենտրոն ձևերի հետ:

ե. Հետազոտական հարցերի և տվյալների ընտրության պարագայում որոշ հարցեր, ինչպես օրինակ՝ ռազմական արշավանքները և հարաբերությունները, գերակա նշանակություն են ձեռք բերում, իսկ տնտեսական և սոցիալական հարցերը՝ երկրորդական, կամ էլ՝ հնագիտական ուսումնասիրությունների մեջ առաջնային տեղ են զբաղեցնում դամբարանների և հարուստ թաղումների ուսումնասիրությունները, ինչը ձևավորում է հին հասարակությունների սոցիալական կառուցվածքի ոչ լիարժեք պատկերը, քանի որ հասարակական ինտեգրման, շերտավորման և տեղական հանրույթների

փոխազդեցության հիմնական մեխանիզմներն ի հայտ են գալիս հենց բնակավայրերի նյութերում:

զ. Վաղ հասարակությունների ուսումնասիրման պարագայում մենք գործ ունենք պետության ոչ թե ինստիտուցիոնալ ներկայացվածության (կայացած պետական մարմիններ և պաշտոնեություն, կոդիֆիկացված իրավունք, կայուն վարչական բաժանում), այլ նրա՝ ինագիտորեն վերհանվող կառուցվածքների (բազմամակարդակ բնակավայրեր, մեկ կամ մի քանի կենտրոններ, ինագիտական մշակույթների տարածական սփռվածություն, ռեսուրսների բաշխում և այլն) հետ:

Ուսումնասիրման այս առանձնահատկությունները պետք է հաշվի առնել վաղ հասարակությունների ուսումնասիրման պարագայում:

Ուսումնասիրության փորձաքննությունը: Ատենախոսությունը քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել ՀՀ Արևելագիտության ինստիտուտի Հին Արևելքի բաժնի կողմից, իսկ դրա հիմնադրույթներն արտացոլված են հեղինակի՝ գիտական պարբերականներում հրապարակված ինը աշխատություններում: Ատենախոսությունում ընդգրկված տարբեր խնդիրներ ներկայացվել են նաև Գագիկ Սարգսյանի ծննդյան 90-ամյակին նվիրված հանրապետական գիտաժողովում (2016 թ. մայիսի 19, «Հին և միջնադարյան Հայաստանը և իր հարևանները»):

Ատենախոսության կառուցվածքը և բովանդակությունը: Ատենախոսությունը կազմված է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից: Ատենախոսության ամբողջ ծավալը 203 էջ է:

Ներածության մեջ հիմնավորվում է թեմայի արդիականությունը, գիտական նորույթը, ներկայացվում են ատենախոսության նպատակը և խնդիրները, տեսամեթոդական հիմքը, ինչպես նաև քննվում են օգտագործված աղբյուրները, գրականությունը և տրվում է հարցի ուսումնասիրվածության ընդհանուր պատկերը:

Ատենախոսության **առաջին գլուխը** վերնագրված է ***«ՊՈԼԻՏՈԳԵՆԵԶԻ ԷՎՈԼՅՈՒՑԻՈՆԻՍՏԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԵՐԸ»*** և կազմված է վեց ենթագլխից:

«Պոլիտոգենեզի տեսությունների համառոտ ակնարկ», «Պոլիտոգենեզ», «Քաղաքակրթություն հասկացությունը» առաջին երեք ենթագլխում ուսումնասիրված են պոլիտոգենեզ և քաղաքակրթություն հասկացությունները, ինչպես նաև պոլիտոգենեզի նախաէվոլյուցիոնիստական

հայեցակարգերը: Չորրորդ՝ ***«Էվոլյուցիոնիզմ»***, ենթագլուխը նվիրված է էվոլյուցիոնիզմի ձևավորմանը և պոլիտոգենեզի էվոլյուցիոնիստական հայեցակարգերին, մասնավորապես՝ Հ. Սպենսերի, Լ. Մորգանի, Կ. Մարքսի, Ֆ. Էնգելսի, Կ. Վիտֆոգելի պոլիտոգենետիկ հայացքներին: Հինգերորդ՝ ***«Պոլիտոգենզի նեոէվոլյուցիոնիստական հայեցակարգերը»*** ենթագլխում քննված են Գ.Չայլդի, Լ. Ուայթի, Ջ. Սթյուարդի, Մ. Ֆրիդի, Է. Սերվիսի, Մ. Սալինզի, Մ. Հարրիսի և Ռ. Կարնեյրոյի պոլիտոգենետիկ հայացքները: Վեցերորդ ենթագլխում՝ ***«Էվոլյուցիոնիզմ. ամփոփում»***, ներկայացված են էվոլյուցիոնիստական դպրոցի հիմնական ձեռքբերումները և այդ դպրոցի շրջանակներում տեղ գտած ծայրահեղ մոտեցումներն ու հոսանքները:

Ատենախոսության **երկրորդ գլուխը** վերնագրված է ***«XX ԴԱՐԻ ՄՅՈՒՍ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՐԴԻ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ»*** և նույնպես կազմված է վեց ենթագլխից: Առաջին ենթագլուխը՝ ***«Դիֆուզիոնիստական դպրոցը»***, նվիրված է վերոհիշյալ ուղղության ձեռքբերումներին և Ֆրանց Բոասի դպրոցին, երկրորդ՝ ***«Կառուցվածքային ֆունկցիոնալիզմ»***, ենթագլխում քննված են առհասարակ այդ դպրոցի և նրա ականավոր ներկայացուցիչներ Բ.Մալինովսկու և Է. Էվանս-Պրիչարդի տեսությունները, «հատվածավոր պետություն» և «լինիջներ» հասկացությունները: Առանձին ենթագլխով քննարկված է Է.Սաութհոլի «հատվածավոր պետությունը»: Չորրորդ ենթագլուխը նվիրված է Ք. Ռենֆրյուի պոլիտոգենետիկ հայացքներին, իսկ հինգերորդ ենթագլուխը՝ Հ. Կլասենի «Վաղ պետություն» հայեցակարգին: Վերջին՝ ***«Արդի տեսություններ»***, ենթագլխում քննված են XX դարի վերջի պոլիտոգենետիկ մոտեցումները, որոնցից կարևորել ենք բլենտոնյան կորպորատիվ և ցանցային ռազմավարությունները, հետերարխիա հասկացությունը և Է.Գիդենսի գործողունակության և Մ.Արչերի մորֆոգենետիկ տեսությունները:

Ատենախոսության երրորդ գլուխը վերնագրված է ***«ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԻ Մ.Թ.Ա. II ՀԱԶԱՐԱՄՅԱԿԻ ՍՈՑԻԱԼ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ»*** և կազմված է հինգ ենթագլխից: Առաջին ենթագլխում՝ ***«Մեթոդաբանական հստակեցումներ»***, քննված են մեթոդաբանական այն հստակեցումները, որոնք անհրաժեշտ է հաշվի առնել Լեռնաշխարհի պոլիտոգենետիկ գործընթացների ուսումնասիրության ժամանակ, մասնավորապես՝ քննված են պետություն հասկացության էվոլյուցիոնիստական, նեոէվոլյուցիոնիստական և արդի չափանիշները: Երկրորդ ենթագլխում՝ ***«Հայկական լեռնաշխարհի***

աշխարհագրական առանձնահատկությունները», ներկայացված են Լեռնաշխարհի աշխարհագրական առանձնահատկությունները, քաղաքական, սոցիալական, միգրացիոն իրավիճակը մ.թ.ա. II հազարամյակում, ինչպես նաև հետերարխիայի դրսևորումները Լեռնաշխարհում նույն ժամանակաշրջանում: Երրորդ ենթագլուխը՝ ***«Գործողունակության դրսևորումները Հայկական լեռնաշխարհում»,*** նվիրված է գործողունակության տեսության տեղայնացմանը լեռնաշխարհի իրողություններին՝ մորֆոգենետիկ մոդելի շրջանակներում Հայկական լեռնաշխարհի կառուցվածքային պայմաններին, ինտեգրման ագենտներին, նոր սոցիալ-քաղաքական կառուցվածքների՝ T4-ի ձևավորմանը: Չորրորդ ենթագլխում՝ ***«Բարդացման մեխանիզմները»***, քննարկված են այն մեխանիզմները, որոնք ազդել են Հայկական լեռնաշխարհի հասարակությունների սոցիալ-քաղաքական կառուցվածքի բարդացման վրա: Հինգերորդ ենթագլխում՝ ***«Հայկական լեռնաշխարհի սոցիո-քաղաքական կազմավորումները մ.թ.ա. II հազարամյակում»,*** քննարկված են լեռնաշխարհի կազմավորումները աշխարհագրական երեք գոտիներով՝ արևմուտք և հարավ-արևմուտք, կենտրոն, հյուսիս-արևելք: Քննարկված են Ալզին, Իսուվան, Մելիդը, Հայասան, Նաիրին, Ուրուատրին, հյուսիս-արևելյան կազմավորումներից՝ Մեծամորը, Լճաշենը, Մոտկանը, Քարաշամբը, Վերին Նավերը:

Եզրակացություն: Հայկական լեռնաշխարհի վաղ քաղաքական կազմավորումների բնույթի գնահատման հարցում անհրաժեշտ է խուսափել երկու հակադիր ծայրահեղություններից, մի կողմից՝ Ն. Յոֆֆեի «օրենքի» չափազանց խիստ կիրառությունից, մյուս կողմից՝ լեռնաշխարհի քիչ թե շատ բարդ կազմավորումները պետություն հռչակելու միտումից: Պետությունը չի կարող ձևավորվել առանց սոցիալական բարդացման, սակայն սոցիալական բարդացումն ինքնին պարտադիր չէ, որ հանգեցնի պետության ձևավորմանը: Անհրաժեշտ է խուսափել նաև տելեոլոգիական (նպատակաբանական) մեկնաբանություններից, որոնք ենթադրում են ցանկացած տարածաշրջանում պետական կառուցվածքների անխուսափելի ձևավորում:

Հայկական լեռնաշխարհի տվյալները վկայում են զարգացման տարբեր ուղիների, այդ թվում նաև զարգացման խզված կամ վերակազմավորված տարբերակների մասին: Կարծում ենք, որ այդ գործընթացները պետք է դիտարկել որպես լեռնաշխարհի առանձնահատուկ աշխարհագրական և սոցիալական պայմաններից բխող զարգացման յուրօրինակ ձև:

Ատենախոսության հիմնական եզրահանգումներն են.

- Պոլիտոգենեզը Հայկական լեռնաշխարհում մ.թ.ա. II հազարամյակում բարդացման ինստիտուցիոնալացման գործընթաց է, որն ի հայտ է գալիս էկոլոգիական, սոցիալական և քաղաքական «հնարավորությունների պատուհանի» դեպքում: Այլ բառերով ասած՝ լեռնաշխարհի մեծամասամբ կորպորատիվ կամ հետերարխիկ հանրույթների բարդ ցանցը, ժամանակ առ ժամանակ, տարբեր հատվածներում, պատմական իրադրության ընձեռած հնարավորությունների դեպքում հանգեցնում է բարդացման կամ հիերարխիկ երևույթների: Նշված իրողություններով են պայմանավորված արագ վերելքներն ու անկումները, ինչպես նաև վերադարձը նախորդ կորպորատիվ ձևերին:
- Լեռնաշխարհի լանդշաֆտի առանձնահատկությունները հակազդում են լեռնաշխարհի արագ միավորմանը մեկ միասնական պետության մեջ: Դա պահանջում է լուրջ ռեսուրսներ՝ թե՛ տնտեսական, թե՛ մարդկային: Սակայն ակնհայտ են ինտեգրման առանձին դեպքերը լեռնաշխարհի որոշ հատվածներում՝ պայմանավորված աշխարհագրական և տնտեսական պայմաններով: Խճանկարային տեսք ունեցող լեռնաշխարհում ձևավորվում են ռեգիոնալ կենտրոններ, որոնք պարբերաբար և վերոնշյալ պատճառներով վերախմբավորվելով՝ ձևավորում են քիչ թե շատ երկար պատմություն ունեցող սոցիալ-քաղաքական կազմավորումներ:
- Լեռնաշխարհը մ.թ.ա II հազարամյակի վերջում բաղկացած էր յուրահատուկ հիմնակմախքներից, որոնք, սխեմատիկ ձևով, կարելի է բաժանել երեք հատվածի՝ արևմտյան և հարավ-արևմտյան, արևելյան, կենտրոնական: Բ. Փրայսի և Ք. Ռենֆրյուի «հավասար պոլիտիաների փոխազդեցության» հայեցակարգերի շրջանակներում առաջարկում ենք դրանք դիտարկել որպես էվոլյուցիոն միավորներ: Արևմտյան հատվածում ինտեգրման գործընթացներն ընթանում են չորս շրջաններով՝ Հայասա, Իսուվա, Մալաթիա, Ալզի, արևելյան հատվածում՝ մ.թ.ա. II հազարամյակում լճաշեն-մեծամորյան մշակույթի տարածման շրջանով (իր տարածաշրջանային տարատեսակներով), որի հետագա ներքին ինտեգրումը, արդեն մ.թ.ա. I հազարամյակում, կբերի Էթիունիի ձևավորմանը: Արևելքն ավելի կոմպակտ է, և գոնե մինչև մ.թ.ա. XII դարը (Ծաղկահովտի և Գեղարոտի կործանում) զերծ է Ասորեստանի կամ մեկ այլ տերության ապակայունացնող ազդեցությունից: Ներքին զարգացումները և բացված «հնարավորությունների պատուհանները» թույլ են տալիս տեղական համայնքներին, համեմատաբար առանց կտրուկ խզումների, շարունակել ներքին զարգացումը, շերտավորումը և վարչական ինստիտուցիոնալացումը:

• Նեոէվոլյուցիոնիստական հայեցակարգերի հարթության վրա լեռնաշխարհը մ.թ.ա. II հազարամյակում տրոհված է եղել բազմաթիվ սոցիալ-քաղաքական կազմավորումների, որոնց մեջ կարող ենք առանձնացնել «վաղ սաղմնային» և «վաղ տիպիկ» պետությունները, բարդ ցեղապետությունները և պարզ ցեղապետությունները: Իսկ հետպրոցեսուալ հնագիտական հարթության վրա ակնհայտ է, որ լեռնաշխարհը մ.թ.ա. II հազարամյակում չի ցուցաբերում կայուն ինստիտուցիոնալացում, քանի որ իշխանությունը վերարտադրվում է հարևան հզոր պետության ազդեցության (Իսուվա), արտաքին վտանգին դիմակայելու նպատակով կազմված համադաշնությունների (Հայասա, Նաիրի, Ուրուատրի) և իշխանության խորհրդանշական կամ կոթողային ցուցադրության (լեռնաշխարհի հյուսիս-արևելք) միջոցով, իսկ կազմավորումների մեծ մասը վարչական ինստիտուցիոնալացման շեմը դեռևս չի հաղթահարում: Այդուհանդերձ, եթե լեռնաշխարհում տեղ գտած գործընթացները դիտարկենք նախորդ փուլերի հետ դինամիկայի մեջ, ապա ակնհայտ է, որ մ.թ.ա. II հազարամյակը ներկայանում է բարդացման և ինտեգրման երկու մակարդակներով, ինչը վկայում է այն մասին, որ սոցիալ-քաղաքական զարգացման տեսակետից լեռնաշխարհը թևակոխել է որակապես նոր փուլ:

• Լեռնաշխարհի սոցիալ-քաղաքական կազմավորումները միշտ չէ, որ ցուցաբերում են պետության հետ ասոցացվող շերտավորում կամ պաշտոնեության հետ ասոցացվող կենտրոնացում: Առհասարակ, շատ դեպքերում, իշխանությունը լեռնաշխարհի տարբեր հատվածներում ներկայանում է առանց ինստիտուցիոնալ համակարգի: Այն Է.Սերվիսի դասական ցեղապետությունը չէ, և միևնույն ժամանակ միջագետքյան պետություն չէ: Դա հիբրիդային ձև է, որը մոտ է ռազմական կոալիցիոն պոլիտիային: Նման պոլիտիաներ վկայված են II-I հազարամյակներում (Պախխուվա, Նաիրի, Ուրուատրի, Էթիունի):

• Մ.թ.ա. II հազարամյակում Հայկական լեռնաշխարհում առկա է հետերարխիկ կորպորատիվ համակարգի որոշակի գերակայություն, որը բխում է նաև լեռնաշխարհի աշխարհագրական պայմաններից և որոշ աղերսներ ունի մայրցամաքային Հունաստանի և այնտեղ ձևավորված պոլիսային համակարգի հետ թե՛ լեռնային ռելյեֆի գերակայության, թե՛ երկրագործության համար պիտանի հողատարածքների սակավության և թե՛ «աշխարհագրական գրպաններով» պայմանավորված հատվածային սոցիալ-քաղաքական կազմակերպման առանձնահատկություններով: Ժամանակ առ ժամանակ,

«հնարավորությունների պատուհանի» դեպքում, լեռնաշխարհի տարբեր հատվածներում ուժեղանում են բլենտոնյան ցանցային ռազմավարությունները, որոնց բնորոշ գծերն են՝ խարիզմատիկ առաջնորդը, արժեքավոր ապրանքների նկատմամբ վերահսկողությունը, հեռագնա առևտուրը, առաջնորդի անձնական կապերը, ցուցադրական կոթողայնությունը. իշխանությունը նման դեպքում կարող է արագ աճ արձանագրել, բայց կայունության տեսակետից այն դեռևս թույլ է:

- Ցեղապետություն-պետություն երկճյուղումը, չնայած կարևոր փուլ է պոլիտոգենետիկ ուսումնասիրություններում, սակայն լեռնաշխարհի հնագիտական և գրավոր նյութը առանձին բացառություններով թույլ չի տալիս նեոէվոլյուցիոնիստական կամ նոր հնագիտության չափանիշներով հստակ բաժանում անցկացնել առկա սոցիալ-քաղաքական կազմավորումների միջև և նրանց հստակ տեղաբաշխել ցեղապետությունների և պետությունների տարբերակված սանդղակով: Ըստ այդմ, առաջարկում ենք լեռնաշխարհի մ.թ.ա. II հազարամյակի սոցիալ-քաղաքական կազմավորումները դիտարկել որպես բարդ հասարակություններ կամ պոլիտիաներ, որոնց ինստիտուցիոնալ վերափոխումը նեոէվոլյուցիոնիստական պետության տեղի կունենա միայն Ուրարտուի շրջանում:
- Հետերարխիայի և հիերարխիայի, կորպորատիվ և ցանցային ռազմավարությունների կիրառման տեսակետից լեռնաշխարհը նույնպես ներկայանում է հիբրիդային ձևերով, ինչը ներկայացված է կից տրվող աղյուսակի մեջ:
- Լեռնաշխարհի տարբեր հատվածներում «հնարավորությունների պատուհանի» դեպքում պարբերաբար ի հայտ է գալիս կենտրոնացում և ինտեգրում սոցիո-քաղաքական որևէ կազմավորման շրջանակներում, բայց կառուցվածքային ամրապնդում այն դեռ չի ստանում, քանի որ բացակայում է ինստիտուցիոնալացման, տարածականության և հարկահավաքման մեխանիզմների համաժամանակյա զուգակցումը: Կենտրոնացումն ի հայտ է գալիս այն ժամանակ, երբ ինտեգրացիոն գործոնների հանրագումարը գերազանցում է հատվածայնության գործոնների հանրագումարին:

Ինտեգրացիոն գործոնների շարքում են՝ բնակչության խտությունը (մ.թ.ա. II հազարամյակին բնորոշ է որոշ հատվածներում, օրինակ՝ Վերին Եփրատի ավազանում, ընդհանուր՝ ցածր մակարդակի վրա է), հաղորդակցությունը կամ տարածական հասանելիությունը, ինչը թույլ է տալիս արագ արձագանքել իրավիճակին (լեռնաշխարհում աշխարհագրական պայմանների հետևանքով

հաղորդակցությունը բարդ է հատկապես ձմռան ամիսներին), ռեսուրսները (նշենք, որ ռեսուրսների պարագայում սոցիալ-քաղաքական հետևանքները պայմանավորված են ոչ թե ռեսուրսների պարզ առկայությամբ, այլ դրանք հայթայթելու և վերահսկելու ձևերով) և դրանց օգտագործումը (հացահատիկ հովիտներում, մետաղի հանքեր, վանական), ինչը լեռնաշխարհում նույնպես հատվածային բնույթ է կրում, ռազմական ճնշումը, որը ժամանակավոր ինտեգրող դեր է խաղում, արտաքին ինտեգրացիոն համակարգերի ազդեցությունը (մ.թ.ա. II հազարամյակում հիմնականում Խեթական տերության ազդեցությունն է Լեռնաշխարհի արևմտյան հատվածների վրա), երկրագործական կենսաապահովման համակարգը, որն ինստիտուցիոնալ ավելցուկի հնարավորություն է ստեղծում:

Հատվածայնության գործոններն են՝ Լեռնաշխարհի լանդշաֆտային բարդությունը, ինտեգրման գլխավոր՝ կառուցվածքային խոչընդոտը, տեղական էլիտաների ինքնավարությունը, անասնապահական կենսապահովման համակարգը:

Առաջարկում ենք ինտեգրման և կենտրոնացման հետևյալ բանաձևը.

C = (D+C+R+MP+IEIS+LSS2) – (L+LE+LSS1), որտեղ Centralisation՝ կայուն կենտրոնացման ներուժն է = Demography (Բնակչության խտություն) + Communication (Հաղորդակցություն) + Resourses (Ռեսուրսներ) + Military pressure (Ռազմական ճնշում) + Impact of external integration systems (Արտաքին ինտեգրացիոն համակարգերի ազդեցություն) – L (Landscape՝ լանդշաֆտ) + LE (Local Elites՝ տեղական էլիտաներ) + LSS (Life-sustaining system՝ կենսապահովման համակարգ - LSS1՝ անասնապահություն, LSS2՝ երկրագործություն):

- Նաև առաջարկում ենք լեռնաշխարհի մ.թ.ա. II հազարամյակի սոցիալ-քաղաքական իրողությունները դիտարկել գործողունակության հայեցակարգի շրջանակներում, որում Հայկական լեռնաշխարհի կառուցվածքային պայմանները (լանդշաֆտ, ռեսուրսներ, աշխարհաքաղաքական միջավայր) ձևավորում են ելակետային փոխդասավորությունը (կոնֆիգուրացիա)՝ T1: Ինտեգրումը կամ վերափոխումը պոլիտիաների տեղի է ունենում սոցիալական փոխազդեցության գործընթացների միջոցով (T2-T3), որոնց շարքը բազմազան է՝ ժողովրդագրական աճ, արձագանք ռազմական սպառնալիքին, ռեսուրսների վերահսկողություն, համայնքի համար կենսական նշանակություն ունեցող աշխատանքներ և այլն: Ընդ որում որպես ինտեգրման ագենտներ կարող են

հանդես գալ համայնքը, վերնախավը, խարիզմատիկ առաջնորդները: Նույն համատեքստում առաջարկում ենք դիտարկել վիշապաքարերի ֆենոմենը. նրանց ստեղծումը կարող էր ոչ միայն կլիմայական փոփոխությունների պատասխան լինել, այլ, որպես կոլեկտիվ գործողությունների օրինակ, նախորդել կամ զուգորդվել սոցիալական բարդացման հետ: Վիշապաքարը ստեղծող, ոռոգման համակարգ կամ բերդ կառուցող համայնքը տվյալ դեպքում հանդես է գալիս որպես կոլեկտիվ ագենտ, որը թեև գործում է նախապես ձևավորված պայմաններում, բայց միևնույն ժամանակ իր նոր գործողություններով վերաձևում է սոցիալական կառուցվածքը՝ հող նախապատրաստելով հետագա սոցիալական բարդացման համար:

- Մ.թ.ա. II հազարամյակում լեռնաշխարհում նկատվում է ինտեգրման երկու փուլ: Առաջին փուլը պարզ հիերախիկ կամ հետերարխիկ պոլիտիաների ձևավորումն է մ.թ.ա. III-II հազարամյակների շեմից մինչև մ.թ.ա. XV դար, XV-XIII դարերը՝ ինտեգրման կոնֆլիկտային (Խեթական տերություն - Հայասա) և ինկորպորատիվ (Խեթական տերություն - Իսուվա) գործոնները հանգեցնում են արևմուտքում, հարավ-արևմուտքում և կենտրոնական հատվածներում «սաղմնային վաղ պետությունների»՝ Ալզիի, Հայասայի, Իսուվայի (Իսուվայի դեպքում հնարավոր է վերաճումը «տիպիկ վաղ պետության»), Մելիդի ձևավորմանը, իսկ լեռնաշխարհի մյուս հատվածներում Միջին բրոնզեդարի դամբարաններում առկա արմատական սոցիալական անհավասարությունը վերափոխվում է բարդ կազմավորումների կամ՝ «ամրոցային պոլիտիաների», որոնց հնագիտական վկայությունները շատ են հյուսիս-արևելյան հատվածում, իսկ գրավոր աղբյուրներում լեռնաշխարհի մյուս հատվածների «ամրոցային պոլիտիաները» ներկայանում են որպես Նաիրի կամ Ուրուատրի երկրների համադաշնություններ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԵՆ ՀԵՂԻՆԱԿԻ ՀԵՏԵՎՅԱԼ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐՈՒՄ

1. Խեթական պետության արտաքին քաղաքականության որոշ հարցերի շուրջ, ՄՄԱԵԺ, 2007, էջ 13-24: https://arar.sci.am/dlibra/publication/312150/edition/286688/content
2. Վաղ պետականությունների առաջացման սոցիալական մեխանիզմների մասին: Արևելագիտությունը Հայաստանում, հ. III. Հին

և միջնադարյան Հայաստանը և իր հարևանները, Երևան, 2017, էջ 69-84: https://arar.sci.am/Content/281081/69-84.pdf
3. Քոսյան Ա. Ղազարյան Ռ., Խանզադյան Մ., Մարտիրոսյան Ս., Մ.թ.ա. XV դարի սեպագրական աղբյուրները Հայկական լեռնաշխարհի մասին, Երևան, 2018 թ., 182 էջ: https://orient.sci.am/archive/652/article-rSz1WhXOR3qZBwFoKMCmtiuJY9gyeDGnE7Q5I4vc.pdf
4. Վաղ պետականության. արտադրության ասիական եղանակը, ՄՄԱԵԺ, 2019, XXXII (2), 14-43. https://arar.sci.am/dlibra/publication/315366/edition/289693/content
5. Ստատիկան և դինամիկան, ժամանակի և գծային զարգացման մասին պատկերացումները Առաջավոր Ասիայում, մաս 1, ՄՄԱԵԺ, 2020, XXXIII (1), էջ 16-48: https://arar.sci.am/dlibra/publication/316175/edition/290194/content
6. Պոլիտոգենեզի տեսությունները էվոլյուցիոնիստական հայեցակարգերում, Մենագրություն, Երևան, 2022, 192 էջ: https://orient.sci.am/archive/958/article-fNRu4QgHJnEXPWTZUYFw9s8hbdDaem1CGBrcpKx7.pdf
7. The «Early State» Project, Լրաբեր Հասարակական Գիտությունների, 1(673) 2025, էջ 104-115 (In English) https://arar.sci.am/Content/398615/104-115.pdf
8. Colin Renfrew's Concepts of State Formation and the Political Formations of the Armenian Highland in the Second Millennium BCE, Fundamental Armenology, Issue 1(21)2025, pp. 3-13. https://fundamentalarmenology.am/datas/pdfs/1041.pdf
9. Կառուցվածքային ֆունկցիոնալիզմի դրույթները պետականության առաջացման մասին», Պատմություն և մշակույթ, 2025, №2, էջ 47-56:

KHANZADYAN MARIAM GAGIK

MECHANISMS AND CHARACTERISTICS OF EARLY STATE FORMATION (A CASE STUDY OF THE STATE POLITIES OF THE ARMENIAN HIGHLAND IN THE SECOND MILLENNIUM BCE)

The dissertation is submitted for pursuing the Scientific Degree of the Candidate of Historical Sciences in the field of «World History» 07.00.02.

The defense of the dissertation will take place on September 18th, 2026, at 12:30 at the meeting of the HESC Specialized Council 006 "World History" at the Institute of Oriental Studies of RA. Address: Yerevan, 0019, Marshal Baghramyan Ave., 24/4.

SUMMARY

The search for "the state" in the Armenian Highland lies between, on the one hand, N. Yoffee's critique of traditional state-centered approaches and, on the other, the tendency to identify virtually every complex socio-political formation in the Highland as a state. It appears that the truth lies somewhere between these two extremes. Most importantly, while state formation cannot occur without social complexity, social complexity does not necessarily lead to the emergence of a state. In general, teleological interpretations that presuppose the inevitable development of state structures in every region should be avoided. The evidence from the Armenian Highland points to multiple developmental trajectories, including interrupted, transformed, and reconfigured pathways. These processes should be viewed as distinctive forms of development shaped by the particular geographical and social conditions of the Highland.

The first chapter of the dissertation, entitled "Evolutionist Concepts of Political Genesis," consists of six sections. The first three sections provide an overview of the concepts of political genesis and civilization and examine pre-evolutionist approaches to political development. The fourth section, "Evolutionism," discusses the emergence of evolutionary theory and reviews the political-genetic views of H. Spencer, L. Morgan, K. Marx, F. Engels, and K. Wittfogel. The fifth section, "Neo-Evolutionary Concepts of Political Genesis," analyzes the approaches of G. Childe, L. White, J. Steward, M. Fried, E. Service, M. Sahlins, M. Harris, and

R. Carneiro. The sixth section summarizes the principal achievements of the evolutionary school as well as its more extreme interpretations and tendencies.

The second chapter, "Other Twentieth-Century Theories and Contemporary Approaches," also consists of six sections. The first section examines the diffusionist school and the contributions of Franz Boas. The second section, "Structural Functionalism," analyzes the theories of the school in general, with particular attention to B. Malinowski and E. E. Evans-Pritchard, as well as the concepts of segmentary states and lineages. A separate section is devoted to Aidan Southall's concept of the segmentary state. The fourth section discusses the ideas of Colin Renfrew, while the fifth examines H. J. M. Claessen's concept of the Early State. The final section, "Contemporary Theories," reviews late twentieth-century approaches to political genesis, focusing on Blanton's corporate and network strategies, the concept of heterarchy, Anthony Giddens's theory of agency, and Margaret Archer's morphogenetic approach.

The third chapter, "Mechanisms of the Formation of Socio-Political Entities in the Armenian Highland during the Second Millennium BCE," consists of five sections. The first, "Methodological Clarifications," addresses methodological issues relevant to the study of political genesis in the Highland, including evolutionary, neo-evolutionary, and contemporary criteria for defining the state. The second section, "Geographical Characteristics of the Armenian Highland," examines the region's geographical features, political and social conditions, migration processes during the second millennium BCE, and manifestations of heterarchy. The third section, "Manifestations of Agency in the Armenian Highland," applies agency theory to the realities of the region.

The fourth section, "Mechanisms of Social Complexity," discusses the processes that contributed to the increasing socio-political complexity of Highland societies, regardless of whether these formations are classified as early states, complex chiefdoms, or complex societies. The fifth section, "Socio-Political Formations of the Armenian Highland in the Second Millennium BCE," analyzes regional formations within three geographical zones: the west and southwest, the central regions, and the northeast. The discussion includes Alzi, Isuwa, Melid, Hayasa, Nairi, and Uruatri, as well as the northeastern centers of Metsamor, Lchashen, Motkan, Verin Naver and Karashamb.

The conclusion summarizes the main results of the dissertation research. The principal conclusions of the study can be summarized as follows.

Politogenesis in the Armenian Highlands during the second millennium BC represented a process of institutionalization of increasing complexity that emerged under conditions of an ecological, social, and political "window of opportunity." Predominantly corporate and heterarchical communities periodically developed more complex and hierarchical forms, followed by periods of decline and a return to earlier models. The specific features of the landscape hindered the rapid unification of the Highlands into a single state while simultaneously contributing to the formation of regional centers. Their periodic regrouping led to the emergence of relatively stable socio-political formations. The dissertation proposes a formula for assessing the potential for sustainable centralization, reflecting the balance between integrative and fragmenting factors.

The dissertation concludes with a bibliography of the sources and scholarly literature used in the study.

ХАНЗАДЯН МАРИАМ ГАГИКОВНА

МЕХАНИЗМЫ И ОСОБЕННОСТИ ФОРМИРОВАНИЯ РАННИХ ГОСУДАРСТВ (НА ПРИМЕРЕ ГОСУДАРСТВЕННЫХ ОБРАЗОВАНИЙ НА АРМЯНСКОМ НАГОРЬЕ ВО II ТЫСЯЧЕЛЕТИИ ДО Н.Э.)

Диссертация представлена на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.02 — «Всемирная история».

Защита состоится 18 сентября 2026 года в 12:30 на заседании специализированного совета 006 «Всемирная история» КВОН РА, действующего при Институте Востоковедения (0019, г. Ереван, пр. Маршала Баграмяна 24/4).

РЕЗЮМЕ

Поиск «государства» на Армянском нагорье находится между, с одной стороны, критикой традиционных государствоцентричных подходов, представленной Н. Йоффе, а с другой - тенденцией рассматривать практически каждое сложное социально-политическое образование нагорья как государство. Представляется, что истина находится между этими двумя крайностями. Прежде всего, хотя государство не может сформироваться без социального усложнения, социальное усложнение само по себе не обязательно приводит к возникновению государства. В целом следует избегать телеологических интерпретаций, предполагающих неизбежное формирование государственных структур в любом регионе. Материалы Армянского нагорья свидетельствуют о существовании различных траекторий развития, включая прерванные, трансформированные и реконфигурированные варианты. Эти процессы следует рассматривать как своеобразные формы развития, обусловленные специфическими географическими и социальными условиями нагорья.

Первая глава диссертации, озаглавленная «Эволюционистские концепции политогенеза», состоит из шести разделов. В первых трех разделах рассматриваются понятия политогенеза, цивилизации и доэволюционистские концепции политического развития. Четвертый раздел - «Эволюционизм» - посвящен становлению эволюционной теории и анализу взглядов на политогенез Г. Спенсера, Л. Моргана, К. Маркса, Ф. Энгельса и К. Виттфогеля. В пятом разделе - «Неоэволюционистские концепции политогенеза» -

рассматриваются концепции Г. Чайлда, Л. Уайта, Дж. Стюарда, М. Фрида, Э. Сервиса, М. Салинза, М. Харриса и Р. Карнейро. Шестой раздел содержит обобщение основных достижений эволюционистской школы, а также анализ ее крайних интерпретаций и направлений.

Вторая глава - «Другие теории XX века и современные подходы» - также состоит из шести разделов. Первый раздел посвящен диффузионистской школе и вкладу Франца Боаса. Во втором разделе - «Структурный функционализм» - рассматриваются теории данного направления в целом, а также взгляды его крупнейших представителей Б. Малиновского и Э. Э. Эванса-Причарда, включая концепции сегментарного государства и линиджей. Отдельный раздел посвящен концепции сегментарного государства Э. Саутхолла. В четвертом разделе анализируются идеи К. Ренфрю, а в пятом - концепция «раннего государства» Х.Классена. Последний раздел - «Современные теории» - посвящен политогенетическим подходам конца XX века, среди которых особое внимание уделено корпоративной и сетевой стратегиям Блантона, концепции гетерархии, теории агентности (agency) Энтони Гидденса и морфогенетическому подходу Маргарет Арчер.

Третья глава - «Механизмы формирования социально-политических образований Армянского нагорья во II тысячелетии до н. э.» - состоит из пяти разделов. Первый раздел - «Методологические уточнения» - посвящен рассмотрению методологических вопросов, которые необходимо учитывать при изучении процессов политогенеза на Армянском нагорье, включая эволюционистские, неоэволюционистские и современные критерии определения государства. Во втором разделе - «Географические особенности Армянского нагорья» - рассматриваются природно-географические характеристики региона, политическая и социальная ситуация, миграционные процессы во II тысячелетии до н. э., а также проявления гетерархии. Третий раздел - «Проявления агентности на Армянском нагорье» - посвящен применению теории агентности к реалиям региона. В четвертом разделе - «Механизмы усложнения» - рассматриваются процессы, способствовавшие возрастанию социально-политической сложности обществ Армянского нагорья, независимо от того, классифицируются ли эти образования как ранние государства, сложные вождества или сложные общества. В пятом разделе - «Социально-политические образования Армянского нагорья во II тысячелетии до н. э.» - анализируются региональные образования трех географических зон:

западной и юго-западной, центральной и северо-восточной. Рассматриваются Алзи, Ишува, Мелид, Хайаса, Наири, Уруатри, а также северо-восточные образования - Мецамор, Лчашен, Моткан, Верин Навер и Карашамб.

В заключении подводятся основные итоги диссертационного исследования. Основные выводы исследования сводятся к следующему.

Политогенез на Армянском нагорье во II тысячелетии до н. э. представлял собой процесс институционализации усложнения, возникавший в условиях экологического, социального и политического «окна возможностей». Преимущественно корпоративные и гетерархические сообщества периодически приобретали более сложные и иерархические формы, сменявшиеся спадами и возвратом к прежним моделям. Особенности ландшафта препятствовали быстрому объединению нагорья в единое государство, одновременно способствуя формированию региональных центров. Их периодическая перегруппировка приводила к возникновению относительно устойчивых социально-политических образований. В работе предлагается формула для оценки потенциала устойчивой централизации, отражающая соотношение интеграционных и фрагментационных факторов.

Диссертацию завершает библиография использованных источников и научной литературы.